

ԳՈՐԻՍ 2022

ՏԻՄ-ԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ
ՀԻՄՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՒ
ՉԱՓՈՓՈՇԻՉՆԵՐԻ ԱՌԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԻԱՎՈՐՎԱԾ
ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ

(ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՕՐԻՆԱԿՈՎ)



Brot
für die Welt



Brot
für die Welt

Սույն զեկույցը պատրաստվել է Ա.Դ. Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոնի Սյունիքի մասնաճյուղի կողմից: Նրանում տեղ գտած տեսակետները արտահայտում են հեղինակի կարծիքը, որը կարող է չհամընկնել Ա.Դ. Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոնի տեսակետների և դիրքորոշումների հետ:

Զեկույցի հեղինակ՝ Սաիդա Օհանջանյան

Մշտադիտարկման հաշվետվություն- /ՏԻՄ-երի կողմից սոցիալական աջակցության տրամադրման հիմնավորվածությունը և չափոփոշիչների առկայությունը Սյունիքի մարզի միավորված համայնքներում (Գորիս համայնքի օրինակով)/- Գորիս, 2022, 23 էջ:

Բովանդակություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	3
ՀՀ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ.....	4
1. ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՉԱՓՈՓՈՇԻՉՆԵՐԸ.....	12
2. ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԻՄ-ԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ՏՐՎԱԾ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ	16
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....	19
ՀԱՎԵԼՎԱԾ 1.....	23
ՀԱՎԵԼՎԱԾ 2.....	24

**ՏԻՄ-երի կողմից սոցիալական աջակցության տրամադրման
հիմնավորվածությունը և չափովոշիչների առկայությունը Սյունիքի մարզի
միավորված համայնքներում**

Սոցիալական աջակցությունը կյանքի դժվարին իրավիճակը կանխարգելելու կամ հաղթահարելու նպատակով անձին (ընտանիքին, սոցիալական այլ խմբին) Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված մեկ կամ մի քանի սոցիալական ծառայությունների տրամադրումն է Հայաստանի Հանրապետության և (կամ) տեղական ինքնակառավարման մարմնի կողմից:

Տեղական ինքնակառավարման մարմինը սոցիալական ծառայություններ է տրամադրում՝

- տեղական սոցիալական ծրագրերի շրջանակներում,
- կամավոր խնդիրների լուծման նպատակով սահմանված սեփական լիազորությունների իրականացման շրջանակներում:

Սոցիալական աջակցության բնագավառում Տեղական ինքնակառավարման մարմինը ունի նաև այլ լիազորություններ, մասնավորապես, համայնքի ղեկավարը՝

- համագործակցում է աջակցող ցանցի հետ,
- աջակցում է սոցիալական աջակցության պետական ծրագրերի իրականացմանը դրանց հասցեականության մեծացման հարցում՝ հայտնաբերելով համայնքի առավել աղքատ, ինչպես նաև սոցիալական աջակցության ծրագրերում ընդգրկված ոչ աղքատ ընտանիքներին,
- իր աշխատակազմի ուժերով կամ աջակցող ցանցի հետ համատեղ կազմակերպում է տնային այցելություններ և հնարավորության դեպքում լուծում տալիս տվյալ ընտանիքի կամ անձի սոցիալական խնդիրներին,
- տարածքային մարմնի մասնագիտական աջակցությամբ կազմակերպում է համայնքի սոցիալական կարիքների գնահատման հիման վրա տեղական սոցիալական ծրագրերի մշակման, ընդունման և դրանց իրականացման գործընթացը:

Սույն հետազոտությունը նպատակ ունի վերլուծել ՀՀ Սյունիքի մարզի միավորված համայնքներում սոցիալական աջակցության տրամադրման համակարգի քաղաքականությունը, մասնավորապես՝ ՏԻՄ-երի կողմից սոցիալական աջակցության տրամադրման հիմնավորվածությունը և չափովոշիչների առկայությունը: Հետազոտությունն իրականացվել է Գորիս համայնքի օրինակով:

Ելնելով հետազոտության նպատակից՝ առաջադրվել են հետևյալ խնդիրները.

1. պարզել՝ Գորիս համայնքում ինչ կարգով են տրամադրվում սոցիալական աջակցությունները և առկա են արդյոք սոցիալական աջակցության տրամադրման հստակ չափովոշիչներ,

2. կատարել սոցիալական աջակցության տրամադրման կարգի համակողմանի վերլուծություն,
3. բացահայտել Գորիս համայնքի ՏԻՄ-երի կողմից քաղաքացիներին տրված սոցիալական աջակցությունների հիմավորվածությունը 2021թ. փետրվար-2022թ. հունիս ամիսների ընթացքում:

Հետազոտական խնդիրների բացահայտման համար մեթոդական և տեղեկատվական հիմք են ծառայել սոցիալական պաշտպանության ոլորտի գործունեությունը կանոնակարգող ՀՀ օրենսդրությունը, ինչպես նաև փաստաթղթերի վերլուծության մեթոդի միջոցով ստացված տեղեկատվությունը:

ՀՀ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Հայաստանի բնակչության մեկ քառորդը և երեխաների մեկ երրորդն ապրում են աղքատության մեջ: Թեև աղքատության մակարդակը նվազում է, սակայն այն շարունակում է մնալ ամենաբարձրերից մեկը Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի (ԵԿԱ) երկրների շրջանում: Ավելին, 2010-2015 թվականներին աղքատությունը հաղթահարած յուրաքանչյուր 3 անձանցից մեկը կրկին հայտնվել է աղքատության մեջ: Բնակչության որոշ խմբեր, ինչպիսիք են մանկահասակ երեխաները, երեք կամ ավելի երեխաներ ունեցող տնային տնտեսությունները և կանանց կողմից ղեկավարվող տնային տնտեսությունները, հատկապես խոցելի են աղքատության նկատմամբ:

Աղքատությունը բազմաչափ երևույթ է և տարբեր կերպ է դրսևորվում՝ շոշափելով կյանքի տարբեր կողմերը, ինչպիսիք են սպառումը, պարենային ապահովությունը, առողջապահությունը, կրթությունը, պաշտպանությունը, անվտանգությունը, արժանապատվության իրավունքը և արժանապատիվ աշխատանքը: Ըստ Համաշխարհային բանկի մարդկային կապիտալի համաթվի (ՄԿՀ)՝ Հայաստանում այսօր ծնված երեխան, երբ մեծանա, կկարողանա միայն 57%-ով իրացնել իր կարողությունների ներուժը, այն առավելագույնի համեմատ, որին հնարավոր կլիներ հասնել, եթե ստանար լիարժեք կրթություն և լիներ լիարժեք առողջ: Այս ցուցանիշով Հայաստանը 157 երկրների շարքում 78-րդ տեղում է:

Հաշմանդամություն ունեցող անձինք կյանքի տարբեր փուլերում անհամաչափորեն ենթարկվում են այնպիսի ռիսկերի և խոցելիության գործոնների ազդեցությանը, ինչպիսիք են աղքատությունը, աշխատատեղերի անհասանելիությունը, անմատչելի առողջապահությունը, այդ թվում՝ վերականգնողական ծառայությունները, և հաստատություններում առանձնացված լինելը:

Քաղաքային և գյուղական շրջանների միջև սոցիալական անհավասարությունը նույնպես մեծ է, հատկապես մայրաքաղաքի և երկրի մյուս բնակավայրերի միջև, իսկ տնտեսական աճը ներառական չէ և դրանից չեն կարողանում օգտվել բնակչության

ամենախոցելի շերտերը: Հայաստանը նաև գտնվում է ծանր ժողովրդագրական իրավիճակում՝ պայմանավորված ծնելիության անկմամբ, բնակչության ծերացմամբ և զանգվածային արտագաղթով, ինչը ճնշում է տնտեսական աճը և մեծացնում առողջապահությանը, կենսաթոշակներին ու սոցիալական ծառայություններին ուղղված ծախսերի ծավալը: Գենդերային անհավասարությունները, հատկապես աշխատուժի մեջ կանանց ցածր մասնակցությունը և կանանց ու տղամարդկանց աշխատավարձերի միջև մեծ տարբերությունը, ավելի են ճնշում Հայաստանի աճի հեռանկարները:

Չնայած վերջին 25 տարիներին արձանագրված զգալի հաջողություններին՝ առողջապահության և կրթության ոլորտներում դեռևս կան լուրջ խնդիրներ. կրթության որակը շարունակում է մնալ ցածր, իսկ ոչ ֆորմալ առողջապահական ծախսերը՝ բարձր: Նշված ոլորտների պետական ֆինանսավորման ծավալները ցածր են ԵԿԱ մյուս երկրների համեմատ: Կրթության կամ առողջապահության ոլորտներին ուղղված ծախսերի համեմատ՝ սոցիալական պաշտպանության ոլորտին ուղղված ծախսերը համեմատաբար բարձր են, սակայն ցածր են ՏՀԶԿ անդամ երկրների միջին ցուցանիշների համեմատ, հաշվի առնելով նաև, որ ծախսերի մեծ մասն ուղղվում է կենսաթոշակների և այլ դրամական նպաստների վճարմանը, մինչդեռ ծառայությունները բավարար չափով չեն ֆինանսավորվում: Եթե մարդկային ներուժի զարգացման ոլորտում անհավասարությունը պահպանվի ու աճի, և մարդկային կապիտալում ներդրումները նախկինի պես անբավարար լինեն, ապա ՀՎՌ (Հայաստանի վերափոխման ռազմավարություն) 2050 նախագծի շրջանակներում ՀՀ կառավարության ձգտումները, ոլորտային գերակայությունները և Կայուն զարգացման օրակարգ 2030-ը կմնան անիրագործելի:¹

Սոցիալական աջակցության իրավունք ունի Հայաստանի Հանրապետությունում բնակվող յուրաքանչյուր ոք՝ ՀՀ քաղաքացիները, ՀՀ-ում բնակության իրավունք (կացության կարգավիճակ) ունեցող օտարերկրյա քաղաքացիները, քաղաքացիություն չունեցող, ինչպես նաև ՀՀ-ում փախստականի կարգավիճակ ունեցող անձինք օրենքով սահմանված հիմքերի առկայության դեպքում:

Սոցիալական աջակցության հիմնական նպատակներն են՝

1) բավարարել կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձի (ընտանիքի կամ սոցիալական այլ խմբի) հիմնական պահանջմունքները և սոցիալական կարիքները.

2) խթանել կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձի ինքնօգնության, ինքնորոշման ու ծագած հիմնախնդիրներն ինքնուրույն լուծելու ունակությունների զարգացումը.

¹ ՀՀ ԱՍՀՆ, Համաշխարհային բանկ, ՅՈՒՆԻՄԵՖ, Հայաստանի սոցիալական պաշտպանության համակարգի խորքային ակտորոշում, 2020թ.:

3) ստեղծել պայմաններ՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձի ներառումը հասարակությունն ապահովելու համար, օժանդակել նրանց սոցիալական խնդիրների լուծմանը, կանխարգելել նրանց սոցիալական մեկուսացումը.

4) կանխարգելել կյանքի դժվարին իրավիճակը:

Սոցիալական աջակցության հիմնական սկզբունքներն են՝

- երեխաներին սոցիալական աջակցություն տրամադրելու առաջնահերթությունը՝ սոցիալական աջակցություն տրամադրելիս երեխաներին նախապատվություն տալը.
- համագործակցությունը՝ սոցիալական աջակցության տրամադրումը աջակցող ցանցի մասնակիցների փոխգործակցության և համատեղ գործունեության հիման վրա.
- համարժեքությունը և շարունակականության ապահովումը՝ սոցիալական կարիքներին առավել համապատասխան սոցիալական աջակցության տրամադրումը, դրանց շարունակականության ապահովումը.
- թափանցիկությունը՝ սոցիալական աջակցության վերաբերյալ տեղեկատվության հասանելի լինելը հասարակության համար.
- սոցիալական խնամառության բացառումը՝ անձի ակտիվության դրսևորման և ինքնօգնության ունակությունների զարգացումը սոցիալական աջակցությունից շարունակական կախվածությունը բացառելու համար.
- նախաձեռնողականությունը՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնվելուն նպաստող գործոնների վերհանումը, այդ գործոնների կանխմանն ու հակազդմանն ուղղված միջոցառումների իրականացումը.
- խտրականության արգելքը՝ սոցիալական աջակցության տրամադրման հավասար հնարավորությունների ապահովումը, սոցիալական աջակցության տրամադրման ընթացքում խտրական վերաբերմունքի բացառումը.
- մասնակցությունն ապահովելը՝ անձի՝ իր սոցիալական խնդիրների լուծման որոշումների կայացմանը մասնակից դարձնելը.
- Կամայականության արգելքը՝ սոցիալական աջակցություն տրամադրելիս միատեսակ փաստական հանգամանքների նկատմամբ անհավասար մոտեցում ցուցաբերելու անթույլատրելիությունը, եթե առկա չէ դրանց տարբերակման որևէ հիմք:

Ինչպես արդեն նշեցինք սոցիալական աջակցությունը կյանքի դժվարին իրավիճակը կանխարգելելու կամ հաղթահարելու նպատակով անձին (ընտանիքին, սոցիալական այլ խմբին) ՀՀ օրենքով սահմանված մեկ կամ մի քանի սոցիալական ծառայությունների տրամադրումն է Հայաստանի Հանրապետության և (կամ) տեղական ինքնակառավարման մարմնի կողմից:

Սոցիալական ծառայությունները Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան իրականացվող միջոցառումներ են՝ ուղղված՝

- 1) անձի (ընտանիքի կամ սոցիալական այլ խմբի) սոցիալ-տնտեսական, սոցիալ-հոգեբանական, սոցիալ-մանկավարժական, սոցիալ-բժշկական, սոցիալ-աշխատանքային, սոցիալ-իրավական կարիքների կամ դրանցից ցանկացածի բավարարմանը և (կամ)
- 2) անձի (ընտանիքի կամ սոցիալական այլ խմբի) բնականոն կենսագործունեության ապահովմանը և (կամ)
- 3) կյանքի դժվարին իրավիճակում հայտնվելու կանխարգելմանը և (կամ) կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձին (ընտանիքին, սոցիալական այլ խմբին) այդ վիճակից դուրս բերելուն:

Հայաստանում իրականացվող ՄՊ ծրագրերի մեծ մասը (68%-ը) կազմում են այն սոցիալական աջակցության ծրագրերը, որոնք պայմանավորված չեն ֆորմալ զբաղվածությամբ՝ եկամտային հարկի վճարմամբ, և ներառում են դրամական աջակցության և խնամքի ծառայությունների տրամադրման ծրագրերը: Ֆորմալ զբաղվածությամբ պայմանավորված դրամական աջակցության ծրագրերը, ինչպիսիք են տարիքային, հաշմանդամության, կերակրողին կորցնելու կենսաթոշակային ու պարտադիր կուտակային կենսաթոշակային ծրագրերը, ինչպես նաև սուբսիդավորման կամ հարկային արտոնություններ տրամադրող ծրագրերը, կազմում են 23%: 2018 թվականին Զբաղվածության ակտիվ ծրագրերը (ԶԱԾ-եր) կազմել են 9%²:

Հայաստանում սոցիալական պաշտպանության ոլորտի ծախսերը ՀՆԱ-ի նկատմամբ միջինում երկու անգամ ավելի քիչ են ՏՀԶԿ անդամ երկրների միջին ցուցանիշից: ՄՊ ծրագրերի ֆինանսավորմանն ուղղված ծախսերը կազմել են պետական բյուջեի ծախսերի գրեթե մեկ երրորդը: Ծախսերի կառուցվածքը արտացոլում է բնակչության կարիքների մեծ մասը, սակայն կենտրոնացած է սահմանափակ թվով սոցիալական պաշտպանության խնդիրների լուծման վրա. միջոցների մեծ մասն ուղղվում է կենսաթոշակների և սոցիալական նպաստների վճարմանը, թողնելով շատ սահմանափակ միջոցներ ոչ դրամական ձևով մատուցվող սոցիալական ծառայությունների համար:

Նպաստների մակարդակը ցածր է և մասամբ է կապված հիմնական պարենային զամբյուղի հետ: Մինևույն ժամանակ, վճարվող դրամական միջոցները պայմանավորված չեն կյանքի նվազագույն չափանիշներով (նվազագույն սպառողական զամբյուղ կամ աղքատության գիծ), ինչպես նաև պայմանավորված չեն շահառուների կոնկրետ կարիքներով: Նպաստների մակարդակը սահմանվում է Կառավարության կողմից՝ շահեկիցների հետ սահմանափակ քննարկումների արդյունքում, և ճշգրտվում կամ փոփոխվում է ըստ անհրաժեշտության, քանի որ կախված է ռեսուրսների առկայությունից: Ինդեքսավորում չի կիրառվում: Սակայն սոցիալական վճարումները, այդ թվում՝ աշխատանքային կենսաթոշակները, մնում են Հայաստանում աղքատության կրճատման կարևորագույն գործիք՝ դատելով

² Տե՛ս նույն տեղում:

Վիճակագրական կոմիտեի տարեկան ՏՏԿԱՀ-ից: Նպաստների վճարումների դադարեցման և այլ աղբյուրներից դրանց չփոխհատուցման պարագայում աղքատության ու ծայրահեղ աղքատության մակարդակները էապես կաճեն:

Սոցիալական ծառայությունները դասակարգվում են ըստ՝

- տրամադրման ձևի.
- տրամադրման գործընթացի կազմակերպման մեխանիզմների.
- սոցիալական ծառայություններ տրամադրողի.
- բնույթի.
- տրամադրման տևողության և դրանց շարունակականության.
- ֆինանսավորման աղբյուրների:

Սոցիալական ծառայությունները, ըստ *տրամադրման ձևի*, դասակարգվում են՝

1) ուղղակի տրամադրվող սոցիալական ծառայություններ, որոնք լինում են՝

- անհատական սոցիալական ծառայություններ, որոնք տրամադրվում են անձին՝ վերջինիս սոցիալական պաշտպանության ապահովման ուղղությամբ առաջացած անհատական կարիքները բավարարելու նպատակով,
- խմբային, որոնք տրամադրվում են ընդհանուր՝ միևնույն կարիքն ունեցող անձանց խմբին միաժամանակ, այդ կարիքները բավարարելու նպատակով.

2) անուղղակի տրամադրվող սոցիալական ծառայություններ, որոնք կրում են ընդհանրական բնույթ և տրամադրվում են միևնույն կարիքն ունեցող սոցիալական խմբին:

Սոցիալական ծառայությունները, ըստ *տրամադրման գործընթացի կազմակերպման մեխանիզմների*, դասակարգվում են՝

1) սոցիալ-վարչարարական ծառայություններ, որոնց տրամադրման պայմաններն ու կարգը, անհրաժեշտ փաստական հանգամանքները (տեղեկությունների ցանկը և դրանք ձեռք բերելու մեխանիզմները) սահմանվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, և դրանց տրամադրման համար ընդունվում է վարչական ակտ.

2) ընդհանուր մասնագիտական ծառայություններ, որոնց տրամադրման համար պահանջվում է ընդհանուր մասնագիտական մեթոդների կիրառում, և որոնք միտված են սոցիալական աջակցություն ստացողի իրավունքների իրականացման ապահովմանը կամ պաշտպանությանը կամ ունեն կանխարգելիչ բնույթ.

3) հատուկ (նեղ մասնագիտական) սոցիալական ծառայություններ, որոնց տրամադրումը պահանջում է նեղ մասնագիտական մեթոդների կիրառում, ինչպես նաև հատուկ տեխնիկական և այլ պայմանների առկայություն:

Սոցիալական ծառայությունները, ըստ *տրամադրողի (տրամադրող սուբյեկտի)*, դասակարգվում են՝

1) Հայաստանի Հանրապետության կողմից տրամադրվող սոցիալական ծառայություններ.

- 2) տեղական ինքնակառավարման մարմնի կողմից տրամադրվող սոցիալական ծառայություններ.
- 3) պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ենթակայության ներքո չգտնվող կազմակերպությունների և ֆիզիկական անձանց կողմից տրամադրվող սոցիալական ծառայություններ:

Սոցիալական ծառայությունները, ըստ *բնույթի*, դասակարգվում են՝

- 1) սոցիալ-տնտեսական, որն ուղղված է անձանց բավարար կենսագործունեության ապահովմանը, կենցաղային պատշաճ մակարդակի ձևավորմանը և կենսամակարդակի բարելավմանը, այդ թվում՝ ցանկացած տեսակի գույքային օգնության տրամադրմամբ.
- 2) սոցիալ-հոգեբանական, որն ուղղված է անձանց հոգեբանական օգնության տրամադրմանը, սոցիալական ներառման նպատակով հոգեբանական վերականգնմանը.
- 3) սոցիալ-մանկավարժական, որն ուղղված է անձանց վարքագծի և զարգացման շեղումների կանխարգելմանը, առողջ ապրելակերպի ձևավորմանը, ժամանցի և հանգստի կազմակերպմանը, ստեղծագործական ընդունակությունների զարգացմանը, երեխաների դաստիարակության հարցում ընտանիքին օգնության տրամադրմանը.
- 4) սոցիալ-բժշկական, որն ուղղված է խնամքի տրամադրման միջոցով անձանց խեղումների, հիվանդությունների զարգացման և ծանրացման կանխմանը, առողջության վերականգնմանը և պահպանմանը, առողջարարական ու վերականգնողական միջոցառումների իրականացմանը և դրանց օժանդակությանը, հիվանդությունների բացահայտման նպատակով մշտական հսկողության իրականացմանը.
- 5) սոցիալ-աշխատանքային, որն ուղղված է անձանց ինքնագրավածության ապահովմանը, հարմար աշխատանքի տեղավորմանը և աշխատանքային հարմարեցման հետ կապված այլ խնդիրների լուծմանը.
- 6) սոցիալ-իրավական, որն ուղղված է անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության նպատակով խորհրդատվության և իրավաբանական օգնության տրամադրման ապահովմանը:

Սոցիալական ծառայությունները, ըստ *տրամադրման տևողության և դրանց շարունակականության*, դասակարգվում են որպես՝

- 1) մշտական, երբ տվյալ սոցիալական ծառայությունը (ծառայությունները) անձին (անձանց որոշակի խմբին) տրամադրվում է (են) մշտապես.
- 2) պարբերական, երբ տվյալ սոցիալական ծառայությունը (ծառայությունները) անձին (անձանց որոշակի խմբին) տրամադրվում է (են) որոշակի պարբերականությամբ.
- 3) մեկանգամյա, երբ տվյալ սոցիալական ծառայությունը (ծառայությունները) անձին (անձանց որոշակի խմբին) տրամադրվում է (են) միայն մեկ անգամ:

Սոցիալական ծառայությունները, ըստ *Ֆինանսավորման աղբյուրների*, դասակարգվում են՝

- 1) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցներից ֆինանսավորվող սոցիալական ծառայություններ.
- 2) համայնքների բյուջեներից միջոցներից ֆինանսավորվող սոցիալական ծառայություններ.
- 3) օրենքով չարգելված այլ աղբյուրներից ֆինանսավորվող սոցիալական ծառայություններ.
- 4) վերոնշյալ մեկից ավելի կետերով սահմանված ֆինանսական միջոցներից ֆինանսավորվող սոցիալական ծառայություններ:

Սոցիալական ծառայությունների տրամադրումը

- չի կարող ուղեկցվել քաղաքական կամ կրոնական քարոզչությամբ.
- չի կարող հետապնդել տրամադրված սոցիալական ծառայությունների դիմաց այլ ծառայություններ կամ որևէ փոխհատուցում ստանալու ակնկալիք.
- չի կարող վնաս պատճառել սոցիալական աջակցություն ստացողի առողջությանը, կյանքին և գույքին:

Տարածքային մարմինները, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ենթակայությամբ գործող կազմակերպությունները սոցիալական ծառայություններ են տրամադրում՝

- 1) սոցիալական ծառայությունների տրամադրում հայցող անձի կամ նրա ներկայացուցչի գրավոր կամ բանավոր դիմումի հիման վրա.
- 2) պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, իրավաբանական և այլ ֆիզիկական անձանց ներկայացրած տեղեկությունների, գրավոր և բանավոր դիմումների, ահազանգերի, զանգվածային լրատվամիջոցների հրապարակումների հիման վրա.
- 3) սեփական նախաձեռնությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված դեպքերում:³

Սոցիալական ծառայությունների տրամադրման հիմնական սկզբունքներն են՝

- մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների ու ազատությունների պաշտպանությունը, մարդու արժանապատվությունը հարգելը.
- հասցեականությունը՝ սոցիալական ծառայությունների տրամադրումը իսկապես դրա կարիքն ունեցող անձին.
- մատչելիությունը՝ տրամադրվող սոցիալական ծառայություններին հասանելիության ապահովումը.
- համաչափությունը՝ հետապնդված նպատակներին համարժեք սոցիալական ծառայությունների տրամադրումը.

³ «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենք, ՀՕ-231 Ն, //URL: <https://www.arlis.am/documentview.aspx?docid=165185>:

- խորհրդապահությունը՝ սոցիալական ծառայությունների տրամադրման ժամանակ հայտնի դարձած անձնական տվյալները չհրապարակելը, բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դեպքերի.
- օրինականությունը՝ սոցիալական ծառայությունների տրամադրումը Հայաստանի Հանրապետության օրենքներին և այլ իրավական ակտերին համապատասխան:

«Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքը սահմանում է հետևյալ հիմնական սոցիալական ծառայությունները՝

- 1) խորհրդատվական օգնությունը.
- 2) վերականգնողական օգնությունը.
- 3) բնախրային օգնությունը .
- 4) կացարանով ապահովելը.
- 5) խնամքը.
- 6) իրավական օգնությունը.
- 7) օրենքով սահմանված կենսաթոշակներ, նպաստներ և այլ դրամական վճարներ նշանակելը և վճարելը.
- 8) օրենքով սահմանված զբաղվածության ծառայությունները և բժշկասոցիալական փորձաքննության բնագավառում ծառայությունները.
- 9) օրենսդրությամբ նախատեսված այլ սոցիալական ծառայություններ:

Հայաստանի Հանրապետությունը սոցիալական ծառայություններ է տրամադրում ստարածքային մարմինների, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ենթակայությամբ գործող կազմակերպությունների միջոցով: Հայաստանի Հանրապետությունը օրենքներով, Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրերով, Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումներով նախատեսված դեպքերում ու կարգով կարող է սոցիալական ծառայություններ տրամադրել նաև այլ կազմակերպությունների և ֆիզիկական անձանց միջոցով:

Հայաստանի Հանրապետությունը և տեղական ինքնակառավարման մարմինը սոցիալական ծառայություններ են տրամադրում (այդ թվում՝ կազմակերպությունների և ֆիզիկական անձանց միջոցով) ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքում և կարգով:

Կազմակերպությունները կամ ֆիզիկական անձինք սոցիալական ծառայությունները տրամադրում են սույն օրենքով սահմանված՝ սոցիալական ծառայությունների տրամադրման նպատակներին և հիմնական սկզբունքներին համապատասխան: Կազմակերպությունները կամ ֆիզիկական անձինք որոշակի սոցիալական ծառայություններ կարող են տրամադրել միայն տվյալ սոցիալական ծառայություն տրամադրելու գործունեությունը լիազորված մարմնում հավաստագրելու դեպքում:

1. ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ
ԿԱՐԳԸ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ
ՉԱՓՈՓՈՇԻՉՆԵՐԸ

Ըստ ՀՀ Սահմանադրության 182-րդ հոդվածի 1-ին մասի՝ տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները լինում են սեփական՝ համայնքի պարտադիր և կամավոր խնդիրների լուծման նպատակով, ինչպես նաև պետության կողմից պատվիրակված: Համայնքի պարտադիր խնդիրները սահմանվում են օրենքով, իսկ կամավոր խնդիրները՝ համայնքի ավագանու որոշումներով⁴:

«Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ տեղական ինքնակառավարման մարմինը սոցիալական ծառայություններ է տրամադրում տեղական սոցիալական ծրագրերի, ինչպես նաև *կամավոր խնդիրների լուծման նպատակով սահմանված սեփական լիազորությունների իրականացման* շրջանակներում:

Սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրները լուծվում են համայնքի ավագանու սահմանած չափորոշիչներով⁵:

ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքի ավագանու 2022 թվականի մարտի 18-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս համայնքում սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրները լուծելու չափորոշիչները սահմանելու մասին» N 42-Ն որոշման համաձայն սահմանվել են Գորիս համայնքում սոցիալական աջակցություն տրամադրելու չափորոշիչները (այսուհետ՝ չափորոշիչ): Սույն չափորոշիչներով սահմանվում են Գորիս համայնքում (այսուհետ՝ համայնք) սոցիալապես անապահով և կյանքի դժվարին իրավիճակում հայտնված ընտանիքներին սոցիալական աջակցություն (այսուհետ՝ աջակցություն) ցուցաբերելու կարգավորումները, աջակցություն ցուցաբերելու գործընթացն ապահովելու համար համայնքի ղեկավարի կողմից մշտական գործող հանձնաժողով ստեղծելու պայմանները և գործունեության ընթացակարգը, աջակցություն ստանալու համար դիմած անձի (անձանց) կարիքների գնահատման միավորները և գնահատման թերթիկի ձևը⁶:

Ըստ չափորոշիչների համայնքի ղեկավարը ստեղծում է համայնքում սոցիալապես անապահով ընտանիքներին և կյանքի դժվարին իրավիճակում

⁴ «Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն», 06.12.2015թ., //URL: <https://www.arlis.am/documentview.aspx?docid=143723>:

⁵ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, 10-րդ հոդված, կետ 11, ՀՕ-337, 07.05.2002թ., //URL: <https://www.arlis.am/documentview.aspx?docid=166230>:

⁶ Գորիս համայնքի ավագանու 2022 թվականի մարտի 18-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս համայնքում սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրները լուծելու չափորոշիչները սահմանելու մասին» N 42-Ն որոշում, //URL: <https://www.goriscity.am/Pages/DocFlow/Default.aspx?a=v&g=e0e94bf6-c583-459e-ba75-acc767bca325>:

հայտնված սոցիալական աջակցությունն ցուցաբերելու գործընթացն ապահովող մշտական հանձնաժողով (այսուհետ՝ հանձնաժողով), որում ընդգրկվում են՝

- համայնքի ավագանու մինչև 5 (հինգ) անդամ,
- 1(մեկ) սոցիալական աշխատող,
- համայնքապետարանի աշխատակազմից 2 (երկու) աշխատող,
- համայնքում գործող հասարակական կազմակերպություններից՝ 3 (երեք):

Հանձնաժողովի ձևավորման մասին հայտարարությունը՝ համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի կողմից տեղադրվում է համայնքի պաշտոնական կայքում և փակցվում է համայնքի ղեկավարի և ավագանու նստավայրում: Հայտարարությունը հրապարակվելուց հետո 10 օրվա ընթացքում Հանձնաժողովի կազմում ընդգրկվելու ցանկություն ունեցող հասարակական կազմակերպություններից ներկայացուցիչները կարող են դիմել համայնքապետարանի աշխատակազմ: Նշված ժամկետը բաց թողնելուց հետո ստացված դիմումները համայնքապետարանի կողմից ընդունման և քննարկման ենթակա չեն:

Համայնքի ղեկավարը հանձնաժողովի կազմից նշանակում է նախագահ, նախագահի տեղակալ և քարտուղար: Հանձնաժողովի նախագահը նշանակվում է ռոտացիոն կարգով՝ նշանակվելու պահից մեկ տարի ժամկետով: Հանձնաժողովի նախագահի տեղակալը փոխարինում է նախագահին՝ նրա բացակայության ժամանակ: Հանձնաժողովի քարտուղար է նշանակվում համայնքի սոցիալական աշխատողը (սոցիալական աշխատողի բացակայության դեպքում հանձնաժողովի կազմում ընդգրկված համայնքապետարանի աշխատակիցներից մեկը):

Հանձնաժողովն իր աշխատանքները կազմակերպում է չափորոշիչներով սահմանված ընթացակարգերին համապատասխան և նիստերի միջոցով: Հանձնաժողովի քարտուղարը հանձնաժողովի նիստի օրվանից առնվազն երեք օր առաջ հանձնաժողովի անդամներին պատշաճ կերպով տեղեկացնում է հանձնաժողովի նիստի օրվա, ժամի, վայրի մասին: Հանձնաժողովի նիստն իրավագոր է, եթե դրան մասնակցում են հանձնաժողովի անդամների կեսից ավելին:

Հանձնաժողովի աշխատանքները կազմակերպվում են քննարկումների միջոցով, որոնց արդյունքում կայացվում են իրավիճակային լուծումներ պահանջող որոշումներ և կազմվում եզրակացություններ: Հանձնաժողովում քննարկվող հարցերի վերաբերյալ որոշումներ և կազմված եզրակացությունները ընդունվում են նիստին ներկա անդամների ձայների մեծամասնությամբ:

Սոցիալական աջակցությունից օգտվելու նպատակով համայնքի ղեկավարին կարող են դիմել.

1) համայնքի բնակիչները, ովքեր հաշվառված են կամ վերջին 2 տարում փաստացի բնակվում են համայնքում,

2) ԱՀ-ից տեղահանված և համայնքում փաստացի բնակվողներ:

Աջակցությունից օգտվելու համար դիմումը ներկայացվում է համայնքապետարանի աշխատակազմ երեք եղանակով՝

- անձամբ,
- փոստով,
- էլեկտրոնային դիմումը հնարավոր է ուղարկել նաև համայնքապետարանի պաշտոնական էլեկտրոնային փոստի միջոցով կամ համայնքապետարանի պաշտոնական կայքի միջոցով:

Բոլոր դեպքերում դիմումի հետ ներկայացվում են ծառայության տրամադրման համար անհրաժեշտ փաստաթղթերը:

Դիմումները համայնքապետարան մուտքագրվելուց հետո 2(երկու) շաբաթյա ժամկետում, հանձնաժողովի քարտուղարը դրանք ներկայացնում է հանձնաժողովի նախնական քննարկմանը: Սոցիալական աջակցություն ստանալու վերաբերյալ դիմումները քննարկվում և դրանց վերաբերյալ որոշումները ընդունվում են 30 աշխատանքային օրվա ընթացքում:

Հանձնաժողովի նախնական քննարկման արդյունքում յուրաքանչյուր դիմումին տրվում է համապատասխան ընթացք անհրաժեշտության դեպքում կատարում է տունայցի կատարում, ընտանիքի կարիքների գնահատում, դիմողի հետ անհատական հանդիպում, դիմումի գրավոր պատասխանի տրամադրում: Դրոնից հետո հրավիրվում է հանձնաժողովի նիստ, որին կարող է մասնակցել նաև դիմումատուն:

Հանձնաժողովի տված դրական եզրակացության հիման վրա համայնքի ղեկավարի կողմից կայացվում է սոցիալական աջակցություն տրամադրելու մասին որոշում: Իսկ հանձնաժողովի տված բացասական եզրակացության դեպքում ևս դիմումատուն գրավոր տեղեկացվում է:

Հրատապ լուծում պահանջող և անհապաղ աջակցության (անհետաձգելի բժշկական միջամտություն, վիրահատություններ, այլ բժշկական կենտրոն տեղափոխելու անհրաժեշտություն) անհրաժեշտության վերաբերյալ դիմումների քննարկումն իրականացվում է արագացված ընթացակարգով՝ սոցիալական աշխատողի և հանձնաժողովի երկու անդամի հատուկ եզրակացության հիման վրա, հանձնաժողովի նախագահի ներկայացմամբ, համայնքի ղեկավարի անմիջական հսկողությամբ և անհապաղ որոշումների կայացման միջոցով:

Համայնքում սոցիալական աջակցության տրամադրման յուրաքանչյուր գործընթաց կազմակերպվում և իրականացվում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված վարչական վարույթի շրջանակներում:

Ընտանիքի⁷ կարիքների գնահատումը կատարվում է միավորային համակարգով՝ ելնելով հետևյալ չափորոշիչներից.

- 1) նպաստառու ընտանիք - 1 միավոր,
- 2) միայնակ մայր - 1 միավոր,
- 4) ամուսնալուծված ծնողի խնամքին գտնվող երեխա - 1 միավոր,
- 5) բազմազավակ՝
 - (չորս, հինգ անչափահաս երեխա ունեցող) ընտանիք -1 միավոր,
 - (վեց և ավելի անչափահաս երեխա ունեցող) ընտանիք – 2 միավոր,
- 6) պարտադիր ժամկետային զինծառայող ունեցող ընտանիք 2 միավոր,
- 7) 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամությանն ունեցող ընտանիք- 2 միավոր,
- 8) հաշմանդամություն ունեցող երեխայի ընտանիք -2 միավոր,
- 9) տնակ կացարանում կամ ոչ հիմնական շինությունում կամ 3-րդ կամ 4-րդ կարգի վթարային ճանաչված շենքում բնակվող ընտանիք - 2 միավոր,
- 10) վարձով բնակվող ընտանիք - 1 միավոր,
- 11) դժբախտ պատահար կամ արտակարգ իրավիճակից (բնական, տեխնածին աղետ) տուժած ընտանիք - 3 միավոր,
- 12) դիմելու օրվան նախորդող երեք ամսվա ընթացքում ընտանիքի անդամի մահվան դեպք- 2 միավոր,
- 13) հայրենիքի պաշտպանության ժամանակ զոհված (անհետ կորած) ունեցող ընտանիք-3 միավոր,
- 14) հայրենիքի պաշտպանության ժամանակ հաշմանդամություն ստացած անձ ունեցող ընտանիք – 2 միավոր,
- 15) միայնակ չաշխատող թոշակառու - 2 միավոր,
- 16) միակողմանի ծնողազուրկ երեխա ունեցող ընտանիք-2 միավոր,
- 17) կյանքի և առողջության համար վտանգավոր պայմաններում բնակվող անչափահաս երեխա ունեցող ընտանիք-3,
- 18) մինչև 23 տարեկան ուսանող ունեցող ընտանիք -2 միավոր,
- 19) առանց ծնողական խնամքի մնացած երեխա ունեցող ընտանիք-3 միավոր,
- 20) խնամակալ՝ (անգործունակ ճանաչված անձի և անչափահասի) ունեցող ընտանիք -3 միավոր,
- 21) կյանքի դժվարին իրավիճակում հայտնված (անհետաձգելի բժշկական միջամտություն, վիրահատություններ, այլ բժշկական կենտրոն տեղափոխելու անհրաժեշտություն) ընտանիք-4,
- 22) անբարենպաստ այլ պայմաններ-1-ից 4 միավոր (հիմնավորում է լրացուցիչ տեղեկատվությամբ և մասնագետի դիտարկումներով):

Աջակցությունը ցուցաբերվում է նվազագույն 4 միավոր ստանալու դեպքում:

⁷ Սույն չափորոշիչների իմաստով ընտանիք է համարվում միննույն հասցեում հաշվառված, մշտապես բնակվող համատեղ տնտեսություն վարող անձանց խումբը, ինչպես նաև միայնակ ապրող անձը:

2. ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԻՄ-ԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ՏՐՎԱԾ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

2021թ. փետրվար-2022թ. հունիս ամիսների ընթացքում Գորիս համայնքի ՏԻՄ-երի կողմից քաղաքացիներին տրված սոցիալական աջակցությունների հիմնավորվածությունը բացահայտելու նպատակով 2022թ. հունիսի 14-ին «Ա. Դ. Սախարովի անվան ՄԻՊ հայկական կենտրոն» ՀԿ-ի Սյունիքի մասնաճյուղը գրավոր դիմել է Գորիս համայնքի ղեկավար Առուշ Առուշանյանին (Տես՝ կից Հավելված 1) և ներկայացրել, որ «Ա. Դ. Սախարովի անվան ՄԻՊ հայկական կենտրոն» ՀԿ-ի Սյունիքի մասնաճյուղը իրականացնում է «ՏԻՄ-երի կողմից սոցիալական աջակցության տրամադրման հիմնավորվածությունը և չափովորչիչների առկայությունը Սյունիքի մարզի միավորված համայնքներում» հետազոտությունը և հետազոտության իրականացման համար անհրաժեշտ է ուսումնասիրել վերջին վեց ամիսների ընթացքում Գորիս համայնքի ՏԻՄ-երի կողմից քաղաքացիներին տրված սոցիալական աջակցությունների հիմնավորվածությունը, սակայն Գորիսի համայնքապետարանի «www.goriscity.am» կայքէջում առկա համայնքի ղեկավարի որոշումներին կցված է միայն սոցիալական աջակցություն ստացած անձանց անուն-ազգանունները և տրամադրված աջակցության չափը (Օր.՝ 10 հունիսի 2022 թվականի N 440-Ա, 30 մայիսի 2022 թվականի N 395-Ա և այլն): Այս նպատակով խնդրում ենք տրամադրել վերջին վեց ամիսների ընթացքում (2021թ. փետրվար-2022թ. հունիս) Գորիս համայնքի ՏԻՄ-երի կողմից քաղաքացիներին տրված սոցիալական աջակցությունների տրամադրման համար «Գորիս համայնքում սոցիալապես անապահով և կյանքի դժվարին իրավիճակում հայտնված ընտանիքներին սոցիալական աջակցություն ցուցաբերելու գործընթացն ապահովող» մշտական հանձնաժողովի տրամադրած եզրակացությունները:

Հարցմանն ի պատասխան 2022թ. հունիսի 23-ին Գորիսի համայնքապետարանից ստացվեց պատասխան (Տես՝ կից Հավելված 2), որում նշված էր, որ Գորիս համայնքի կողմից քաղաքացիներին տրամադրված աջակցությունների վերաբերյալ հրապարակման ենթակա տեղեկատվությունը հրապարակվել է «www.goriscity.am» կայքէջում: Գորիս համայնքում սոցիալապես անապահով և կյանքի դժվարին իրավիճակում հայտնված ընտանիքներին սոցիալական աջակցություն ցուցաբերելու գործընթացում մշտական հանձնաժողովի կողմից կազմվում է «Եզրակացություն», որը պարունակում է մարդու անձնական և ընտանեկան կյանքի գաղտնիություն, ուստի «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն տեղեկատվության տրամադրումը մերժվում է:

Փաստորեն, հնարավորություն չունենալով անձնամբ ուսումնասիրել Գորիս համայնքի ՏԻՄ-երի կողմից քաղաքացիներին տրված սոցիալական աջակցությունների հիմավորվածությունը, որոշակի տեղեկություններ ստացանք «<https://mediapoint.am/>» կայքէջում տեղադրված «Գորիս համայնքի սոցիալական օգնության բյուջեն այս տարի կիսով չափ կրճատվել է» հոդվածից, որտեղ, մասնավորապես, նշված էր. «2021թ.-ին Գորիս համայնքի ղեկավարը համայնքի բնակիչներին դրամական օգնություն տրամադրելու վերաբերյալ 49 որոշում է ընդունել: Գորիսի համայնքապետարանի ֆինանսատնտեսական և եկամուտների հավաքագրման բաժնի պետ Նարեկ Մնացականյանի խոսքով՝ 2021թ.-ին 43 մլն 560 հազար դրամ դրամական աջակցություն է հատկացվել: Համայնքի 2022թ.-ի բյուջեով սոցիալական օգնության համար նախատեսված է 22 մլն դրամ, որից մինչ օրս հատկացվել է 7 մլն 485 հազար դրամ: Այսինքն, նախորդ տարվա համեմատ՝ մոտ կեսով նվազել է համայնքի բյուջեից դրամական աջակցության համար հատկացվող գումարը:

2021թ.-ի հունվար ամսին մի քանի անգամ դրամական աջակցություններ են տրամադրվել. մեկ բնակչի՝ 100 հազար դրամ, 50 բնակչի՝ 2 մլն 860 հազար դրամ, 4 բնակչի՝ 260 հազար դրամ, երկու բնակչի՝ 100 հազար և 200 հազարական դրամ, այնուհետև երկու բնակիչների 100 և 50 հազար դրամ, 5 բնակչի՝ 470 հազար դրամ, 3 բնակչի 500 հազար դրամ, մեկ բնակիչ 100 հազար դրամ: Այսինքն, հունվար ամսին տրամադրված դրամական աջակցությունները կազմել են՝ ընդհանուր 4 մլն 840 հազար դրամ, իսկ հունիս ամսվա ընթացքում տրամադրվել է 11 մլն 490 հազար դրամ աջակցություն: 115 բնակչի տրվել է 6 մլն 130 հազար դրամ, 2 բնակչի՝ 300 հազար և 70 հազար դրամ, 6 բնակչի՝ 1 մլն 40 հազար դրամ և 2 բնակչի՝ 300 և 200 հազարական դրամ:

Համայնքի ղեկավարի 2022թ.-ի որոշումները, որոնք վերաբերում են դրամական օգնություններին՝ դեռևս 3-ն են. մայիս ամսվա մեջ երկու անգամ տրամադրվել է 2 մլն 430 հազար դրամ համայնքի 25 բնակչի և 2 մլն 940 հազար դրամ աջակցություն՝ 33 բնակչի, որը կազմում է 5 մլն 370 հազար դրամ: Մի քանի օր առաջվա՝ հունիսի 10-ի որոշման մեջ՝ նշված է, որ Գորիս համայնքի 9 բնակչի կտրամադրվի 710 հազար դրամական աջակցություն՝ նվազագույնը 50 հազար, իսկ առավելագույնը՝ 120 հազար դրամ:

Գորիսի համայնքապետարանի հանրային կապերի, կրթության, մշակույթի, սպորտի, երիտասարդության և սոցիալական հարցերի բաժնի գլխավոր մասնագետի պաշտոնակատար Մարիաննա Աբգարյանը նշում է, որ դրամական աջակցություն տրամադրելու համար՝ համայնքի ղեկավարի նախաձեռնությամբ ստեղծվել է (2022թ.մարտի N42 որոշում) սոցիալապես անապահով ընտանիքներին և կյանքի դժվարին իրավիճակում հայտնված սոցիալական աջակցություն ցուցաբերելու գործընթացն ապահովող մշտական հանձնաժողով: Որոշման կարգի

համաձայն՝ հանձնաժողովում ընդգրկվում են համայնքի ավագանու մինչև 5 անդամ, մեկ սոցիալական աշխատող, համայնքապետարանի աշխատակազմից երկու աշխատող, համայնքում գործող հասարակական կազմակերպություններից՝ 3: Հանձնաժողովի կազմում ընդգրկվելու ցանկություն է հայտնել հասարակական կազմակերպություններից միայն ԳՈԻՄ ՀԿ-ն: Ավագանու 5 անդամներից 2-ը՝ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության անդամներ են, 2-ը՝ «Առուշ Առուշանյան» դաշինքից մեկը՝ «Հայ ազգային կոնգրես»-ից: Համայնքապետարանի աշխատակազմից Գորիս համայնքի ղեկավարի առաջին տեղակալը, որը նաև հանձնաժողովի նախագահ է նշանակվել, և համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսական և եկամուտների հավաքագրման բաժնի գլխավոր մասնագետի պաշտոնակատարը՝ հանձնաժողովի նախագահի տեղակալ, իսկ համայնքապետարանի հանրային կապերի, կրթության, մշակույթի, սպորտի, երիտասարդության և սոցիալական հարցերի բաժնի գլխավոր մասնագետի պաշտոնակատարը՝ հանձնաժողովի քարտուղարն է:⁸»

Փաստորեն, կարող ենք եզրակացնել, որ սոցիալական աջակցության տրամադրման չափորոշիչների սահմանումն ու կիրարկումն իրենց դրական ազդեցությունն են թողել սոցիալական աջակցությունների տրամադրման համարժեքության, թափանցիկության ապահովման, և կամայականության ու սոցիալական խնամառության բացառման գործում:

⁸ «https://mediapoint.am/?p=12065&fbclid=IwAR0_OZATgE62Df-BvGe1ZogkoC1b1auglhEn3mynmGidbWARwilsh_ZQQD0», (մուտք՝ 18.06.2022թ.):

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Հայաստանում իրականացվող սոցիալական պաշտպանության ծրագրերի մեծ մասը կազմում են այն սոցիալական աջակցության ծրագրերը, որոնք պայմանավորված չեն ֆորմալ զբաղվածությամբ՝ եկամտային հարկի վճարմամբ, և ներառում են դրամական աջակցության և խնամքի ծառայությունների տրամադրման ծրագրերը, իսկ զբաղվածության ակտիվ կազմում են շատ փոքր մաս:
2. Հայաստանում սոցիալական պաշտպանության ոլորտի ծախսերի մեծ մասը կենտրոնացած է սահմանափակ թվով սոցիալական պաշտպանության խնդիրների լուծման վրա. միջոցների մեծ մասն ուղղվում է կենսաթոշակների և սոցիալական նպաստների վճարմանը, թողնելով շատ սահմանափակ միջոցներ ոչ դրամական ձևով մատուցվող սոցիալական ծառայությունների համար:
3. Սոցիալական վճարումները, այդ թվում՝ աշխատանքային կենսաթոշակները, մնում են Հայաստանում աղքատության կրճատման կարևորագույն գործիք: Չնայած, որ սոցիալական նպաստը լուծում չէ, քանի որ սոցիալական նպաստով օժանդակություն ստացող ընտանիքները շարունակում են կառչած մնալ նպաստին, այնուամենայնիվ նպաստների վճարումների դադարեցման և այլ աղբյուրներից դրանց չփոխհատուցման պարագայում աղքատության ու ծայրահեղ աղքատության մակարդակները էապես կաճեն: Ուստի անհրաժեշտ է սոցիալական աջակցության ծրագրերը աստիճանաբար փոխարինել զբաղվածության ծրագրերով՝ սոցիալական խնամատության բացառման համար:
4. ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքի ավագանու 2022 թվականի մարտի 18-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս համայնքում սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրները լուծելու չափորոշիչները սահմանելու մասին» N 42-Ն որոշման համաձայն սահմանվել են Գորիս համայնքում սոցիալական աջակցություն տրամադրելու չափորոշիչները: Սույն չափորոշիչներով էլ սահմանվում են Գորիս համայնքում սոցիալապես անապահով և կյանքի դժվարին իրավիճակում հայտնված ընտանիքներին սոցիալական աջակցություն ցուցաբերելու կարգավորումները, աջակցություն ցուցաբերելու գործընթացն ապահովելու համար համայնքի ղեկավարի կողմից մշտական գործող հանձնաժողով ստեղծելու պայմանները և գործունեության ընթացակարգը, աջակցություն ստանալու համար դիմած անձի (անձանց) կարիքների գնահատման միավորները և գնահատման թերթիկի ձևը: Սակայն չափորոշիչներում առկա չէ որևէ նշում աջակցությունը ստանալուց հետո քաղաքացու

հաշվետվողականության վերաբերյալ, թե արդյոք տրամադրված աջակցությունը ծառայել է իր նպատակին: Անհրաժեշտ ենք համարում նախատեսել նաև համապատասխան դրույթներ՝ հաշվետվողականության մակարդակի բարձրացման նպատակով:

5. Սոցիալական աջակցության տրամադրման չափորոշիչների սահմանումն ու կիրարկումն իրենց դրական ազդեցությունն են թողել սոցիալական աջակցությունների տրամադրման համարժեքության, թափանցիկության ապահովման, և կամայականության ու սոցիալական ինսամառության բացառման գործում:

1.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. «Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն», 06.12.2015թ., //URL:
<https://www.arlis.am/documentview.aspx?docid=143723>:
2. «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, ՀՕ-337, 07.05.2002թ., //URL:
<https://www.arlis.am/documentview.aspx?docid=166230>:
3. «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենք, ՀՕ-231 Ն, //URL:
<https://www.arlis.am/documentview.aspx?docid=165185>:
4. Գորիս համայնքի ավագանու 2022 թվականի մարտի 18-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս համայնքում սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրները լուծելու չափորոշիչները սահմանելու մասին» N 42-Ն որոշում, //URL:
<https://www.goriscity.am/Pages/DocFlow/Default.aspx?a=v&g=e0e94bf6-c583-459e-ba75-acc767bca325>:
5. ՀՀ ԱՍՀՆ, Համաշխարհային բանկ, ՅՈՒՆԻՍԵՖ, Հայաստանի սոցիալական պաշտպանության համակարգի խորքային ախտորոշում, 2020թ.:
6. «https://mediapoint.am/?p=12065&fbclid=IwAR0_OZATgE62Df-BvGe1ZogkoC1b1auglhEn3mynmGidbwARwilsh_ZQQDo», (մուտք՝ 18.06.2022թ.):



«Ա. Դ. Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոն» հասարակական կազմակերպություն «Սյունիքի» մասնաճյուղ

ՀՀ, ք. Գորիս, 3201; Կոմիտասի նրբ., տուն 3;
Հեռ. (+374 77 879799); Fax: (+37410) 561 505; E-mail: sakhgoris@gmail.com; armsakhfd@gmail.com;
Website: www.sakharovcenter.org

14 հունիսի, 2022թ.

Ե-7

ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքի ղեկավար՝
Առուշ Առուշանյանին
«Ա. Դ. Սախարովի անվան ՄԻՊ հայկական կենտրոն» ՀԿ, «Սյունիքի» մճ.
ՀՀ, ք. Գորիս, Կոմիտասի նրբ., տուն 3
Հեռ. (+374 77 879799); sakhgoris@gmail.com

Տեղեկություն ստանալու հարցում

Հարգելի՛ պրն. Առուշանյան,

«Ա. Դ. Սախարովի անվան ՄԻՊ հայկական կենտրոն» ՀԿ-ի Սյունիքի մասնաճյուղը իրականացնում է «ՏԻՄ-երի կողմից սոցիալական աջակցության տրամադրման հիմնավորվածությունը և չափովորչիչների առկայությունը Սյունիքի մարզի միավորված համայնքներում» հետազոտությունը: Հետազոտության իրականացման համար անհրաժեշտ է ուսումնասիրել վերջին վեց ամիսների ընթացքում Գորիս համայնքի ՏԻՄ-երի կողմից քաղաքացիներին տրված սոցիալական աջակցությունների հիմնավորվածությունը, սակայն Գորիսի համայնքապետարանի «www.goriscity.am» կայքէջում առկա համայնքի ղեկավարի որոշումներին կցված է միայն սոցիալական աջակցություն ստացած անձանց անուն-ազգանունները և տրամադրված աջակցության չափը (Օր.՝ 10 հունիսի 2022 թվականի N 440-Ա, 30 մայիսի 2022 թվականի N 395-Ա և այլն): Այս նպատակով, համաձայն ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ և 9-րդ հոդվածների պահանջների, խնդրում եմ ինձ տրամադրել վերջին վեց ամիսների ընթացքում Գորիս համայնքի ՏԻՄ-երի կողմից քաղաքացիներին տրված սոցիալական աջակցությունների տրամադրման համար «Գորիս համայնքում սոցիալապես անապահով և կյանքի դժվարին իրավիճակում հայտնված ընտանիքներին սոցիալական աջակցություն ցուցաբերելու գործընթացն ապահովող» մշտական հանձնաժողովի տրամադրած եզրակացությունները:

Խնդրում եմ տեղեկություն ստանալու հարցումիս պատասխանել օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

Տեղեկատվության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում եմ գրավոր տեղյակ պահել մերժման հիմքի մասին և հնարավորության դեպքում տրամադրել այն պետական մարմնի կամ պաշտոնատար անձի հասցեն, որին կարող եմ ուղղել հարցումը:

Խնդրում եմ ծանուցումը ուղարկել էլեկտրոնային տարբերակով:

Կանխավ շնորհակալ եմ:

Դիմող՝
«Ա. Դ. Սախարովի անվան ՄԻՊ հայկական կենտրոն» ՀԿ-ի
Սյունիքի մասնաճյուղի ղեկավար

Նանե Մնացականյան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳՈՐԻՍԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ**

3201 Սյունիքի մարզ ք. Գորիս, Անկախության 3, հեռ. (0284)2-25-52
Էլ. փոստ՝ goris.syuniq@mta.gov.am, www.goriscity.am

23 հունիս 2022թ. N 02/04/05-1110

**<<Ա.Դ. ՍԱԽԱՐՈՎԻ ԱՆՎԱՆ ՄԱՐԴՈՒ
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՀԿ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ
ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԴԵԿԱԿԱՐ
ՆԱԵ ՄԱՑԱԿԱՆՅԱՆԻՆ**

Հարգելի Ներսիսյան

Ի պատասխան Ձեր 14.06.2022թ-ի դիմումի տեղեկացնում եմք, որ Գորիս համայնքի կողմից քաղաքացիներին տրամադրված աջակցությունների վերաբերյալ հրապարակման ենթակա տեղեկատվությունը հրապարակվել է <<goriscity.am>> կայքէջում: Գորիս համայնքում սոցիալապես անապահով և կյանքի դժվարին իրավիճակում հայտնված ընտանիքներին սոցիալական աջակցություն ցուցաբերելու գործընթացում մշտական հանձնաժողովի կողմից կազմվում է <<Եզրակացություն>>, որը պարունակում է մարդու անձնական և ընտանեական կյանքի գաղտնիություն: << Տեղեկատվության ազատության մասին>> ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն տեղեկատվության տրամադրումը մերժվում է:

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱԿԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

ԱՐՏՅՈՒ ՄԱՐՁԱՆՅԱՆ

Կատ. ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏ՝ Սուրիկ Ծատրյան